ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 154-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի, 14-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի, «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի, 9-րդ հոդվածի 1-ին մասի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի՝ «Եղեգնաձոր համայնքի տարածքում 2023 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 154-Ն որոշման N 2 հավելվածում (տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը) լրացնել ստորև բերված նոր 17-րդ կետ.

«17.	**Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող, Եղեգնաձոր քաղաքի ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոց կայանելու համար գանձվում է վճար հետևյալ դրույքաչափերով՝**	
1)	Յուրաքանչյուր մեկ ժամվա համար	150
2)	Յուրաքանչյուր մեկ օրվա համար	700
3)	Մեկ շաբաթվա համար	3 000
4)	Մեկ ամսվա համար	7 000
5)	Մեկ տարվա համար	8 0000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: